ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՌԱԶՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Բանալի բառեր- Բարոյական գիտակցություն, կենսաբանական հիմքեր, կենսաբանականացում, վարքագիծ, բարոյական նորմ, կենսաբանականի սոցիալականացում:

Կենսաբանականի և սոցիալականի հարաբերակցության հարցը վաղուց ի վեր դարձել է մի շարք գիտությունների ուսումնասիրության առարկա, մինչդեռ այդ ծավալուն հարցի շրջանակներում համեմատաբար ավելի քիչ է ուսումնասիրված բարոյական գիտակցության բժշկակենսաբանական ասպեկտները: Այս հարցում գերակշռում է երկու հիմնական մոտեցում. առաջինի համաձայն սոցիալական պայմաններն են ձևավորում անհատի բարոյական կերպարը, իսկ երկրորդ տեսակետը էթիկական նորմերի ձևավորման հիմքերը որոնում է կենսաբանական-ժառանգական մեխանիզմներում: Մինչև օրս երկու հակադիր կարծիքներում էլ ավելի շատ են հարցերը քան փաստարկված պատասխանները:

Տարբեր ժամանակաշրջաններում գիտական առաջավոր միտքը (Արիստոտել, Թ. Աքվինացի, Լոմբրոզո, Ֆրեյդ, Ֆրոմ և այլն) արձանագրել է, որ հասարակության մեջ ժառանգական գործոնը պահպանում է երկար ժամանակ իր ազդեցության մեխանիզմները: Որքան կարելի է ճշմարիտ համարել այն մեկնաբանությունը, որ բարոյական սկզբունքները սերնդեսերունդ փոխանցվում են միայն դաստիարակության միջոցով, և յուրաքանչյուր մարդ ամեն անգամ այն ձեռք է բերում նորից, նույնքան ճշմարիտ կարելի է համարել հաջորդ տեսակետը, որը ոչ պակաս փաստերով պնդում է, որ առանց համապատասխան գենետիկական հիմքերի գոյություն ունեցող սոցիալական ժառանգականությունը հազիվ թե կարող է այդ երևույթին հաղորդել կայունություն և ընդհանրություն: Այս առնչությամբ երբեք միանշանակ չպետք է ընդունել այն տեսակետը, թե մարդը իբր բնութագրվում է միայն բանական էգոիզմով, որի արմատները որոնվում են նրա կենսաբանական-սուբստանցիոնալ կեցության աշխարհում, իսկ էգոիզմը և ալտրուիզմը ի սկզբանե ապրում են մարդու մեջ[1]: Ավելին, ժա-

[1] Տե՛ս **Швйцер А.** Култура и этика.М.,1973, էջ 159:

մանակակից գենետիկայի նվաճումները խոսում են այն մասին, որ մարդկային տեսակի էվոլյուցիայի ընթացքում պահպանվել են էթիկական ռեակցիաների մի ողջ շղթա, որն ավելի շատ միտված է դեպի ալտրուիստական հիմնական կողմնորոշիչները: Ընդ որում, վերջինիս տակ հասկանում ենք մարդու հույզերի, զգացմունքների, մղումների այն ամբողջությունը, որը հաճախ տվյալ մարդու շահերից չի բխում և երբեմն անգամ վտանգում է այն:

Դարվինը և հետագայում ուրիշ այլ հետազոտողներ նկատում են, որ անհատական, խմբային բնական ընտրության մեխանիզմում դրսևորվում է ինչպես միմյանց դեմ պայքարի, այնպես էլ փոխադարձ օգնության օրենքը: Տեսակի պահպանման ու զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է փոխադարձ օգնության օրենքով, որն անխուսափելիորեն ծնում է տեսակի ներսում որոշակի բարոյական կողմնորոշումներ, ալտրուիստական հույզեր: Այսպիսով, վերջիններիս դրսևորման համար գոյություն ունի կենսաբանական այն հիմքը, ինչպիսին տեսակի պահպանման ու զարգացման անհրաժեշտությունն է: Բնական ընտրության արդյունքում կատարելագործվում են պայմանական ռեֆլեքսներն ու բնազդները, որոնք նպաստում են համախմբվածության և կոլեկտիվ գործունեության համար պայմաններ ստեղծելուն:

Հայտնի է, որ հասարակական արտադրության կարևորագույն կողմերից մեկը մարդու վերարտադրությունն է: Հենց այդ օրինաչափությունն էլ իր մեջ ամբողջացնում է ալտրուիզմի, ինքնազոհության, առաքինության և այլ բարոյական իմպերատիվները, որոնց շարունակական վերարտադրությունը երբեմն առեղծված է թվում, որն ավելի շատ տրված է դժվար բացատրվող և հիմնավորվող իռացիոնալում քան թե ռացիոնալում: Այդ շղթայում ալտրուիզմը ոչ թե պատահական, քաոսային բնույթ է կրել, այլ ունեցել է իր կայուն զարգացման ուղին: Պետք է ենթադրել, որ եսասիրությունը անհատի գիտակցության մեջ աստիճանաբար է վերածվում ալտրուիզմի: Հետևաբար, հարկ է ելնել այն բանից, որ ալտրուիզմը առաջանում է հասարակության մտածողության մեջ այնուհետև անցնում է անհատի համոզմունքների ոլորտը:[1]

Հասկանալի է, որ բնական ընտրությունը չի ստեղծվել և չի էլ կարող ստեղծել բարոյականություն, բայց այն ստեղծել է ժառանգականության այնպիսի ձևափոխումներ, որոնց հենքի վրա մարդու մոտ հնարավոր է դարձրել որոշակի հույզերի և էթիկական սկզբունքների ձևավորման ընկալումը, էթիկական գնահատականների ոչ միայն սահմանումը այլև դրանց նկատմամբ պահանջների առաջացումը:

[1] Տե՛ս **Швйцер А.** Культура и этика.М.,1973,էջ159

Համամարդկային բարոյական արժեքների զարգացման հարցում որոշակի դեր է կատարում սոցիալական ժառանգականությունը և դաստիարակությունը: Ընդ որում սոցիալական մեկ ինստիտուտը կարող է նպաստել՝ այս կամ այն բարոյական հատկության դրսևորմանը, իսկ մյուսները՝ ընդհակառակը ձևափոխել, այլասերել այն: Այդ պատճառով էթիկական սկզբունքների այսպես կոչված ժառանգական կողմերից զանազան պատմական դարաշրջաններում իրականանում է միայն այն մասը, որը համապատասխանում է տվյալ դարաշրջանի սոցիալական պայմաններին, թերևս հասարակության էվոլյուցիայի ընթացքում սոցիալականի սաղմերը պոտենցյալ հարթությունից վերաճում են սոցիալական կոնկրետ ռեալության, որի ընթացքում սոցիալականը չի արգելակում կամ կաշկանդում կենսաբանականին , այլ ենթարկվելով նրա օրենքներին, սոցիալականն իր հերթին մշտապես փորձում է սեփական իշխանությունը հաստատել կենսաբանականի զարգացման ռիթմերի վրա:

Մարդաբանները պնդում են, որ կենսաբանական մատերիայի զարգացման որոշակի փուլում մարդու առաջացումն ավելի շատ օրինաչափ է, քան թե պատահական, որով և պայմանավորված է եղել անհատի հիմնական սոցիալական հատկանիշների ձևավորումը: Հենց այդ զարգացման վերջնական արդյունքում մարդու սոցիալական վարքագծի ծրագիրը կառուցվում է կենսաբանական ակտիվ հենքի վրա:

Հավանաբար մարդու առօրեական գիտակցությունը վաղնջական ժամանակներից սկսած նկատել է, որ մինչ հասարակականում բարոյականի դրսևորվելը այն կենդանականում է սկիզբ առել: Գուցե այդ ընկալումներով և տրամաբանությամբ են առաջնորդվել անտիկ աշխարհում, երբ բարոյականն ընկալվել է ոչ այլ ինչ, եթե ոչ բնական ներդաշնակության նմանակում:

Բարոյականի կենսաբանական նախադրյալների երևան գալը պայմանավորված է ողջ կենսաբանական աշխարհին բնորոշ գոյության պայքարի հանգամանքով: Վերջինս անհնար է առանց վարքագիծը կարգավորող կենսաբանական որոշակի համակարգի գոյության: Կենդանիների վարքագծի կենսաբանական կարգավորումը կատարվում է հոգեկան այնպիսի բարդ գործոնների միջոցով, ինչպիսիք են բնավորությունը, կյանքի ընթացքում ձևավորված ժամանակավոր կարգավորիչները: Կենդանական աշխարհի բարձրագույն տիպերին հատուկ բնազդների շարքին են դասվում ինքնապաշտպանությունը, սննդի, կողմնորոշման բնազդները, հաղորդակցվելու ունակությունը: Առավել կարևոր և որոշիչ բնազդները ինքնապաշտպանական կամ կյանքի բնազդներ են, որոնք արտահայտում են օրգանիզմում տեղի ունեցող բոլոր գործընթացների ուղղվածությունը, այդ թվում կյանքի պահպանմանն ուղղված վարքագիծը: Ինքնապահ-

պանման երևույթը իր հերթին ներառում է տեսակի պահպանման գործոնը, որը դրսևորվում է բարոյական նորմ հիշեցնող վարքագծի կարգավորման համապատասխան ձևերում: Տեսակի պահպանմանն ուղղված միտումը հաճախ դրսևորվում է որպես մարդկային ալտրուիզմին նախորդող երևույթ և նրա կենսաբանական համանմանություն, իսկ անհատի ինքնապաշտպանության միտումը՝ որպես եսասիրության (էգոիզմի) կենսաբանական նմանակում: Առաջինը պայմանականորեն կարելի է անվանել կենսաբանական ալտրուիզմ, իսկ երկրորդը՝ կենսաբանական էգոիզմ: Թե առաջինը, և թե երկրորդը զարգանում են մարդկանց վարքագծի և կենսաբանական, և սոցիալական նորմերի համակարգում, մարդկանց համատեղ աշխատանքային գործունեության ընթացքում: Այդ պատճառով մարդկային բարոյականության էությունը անհնար է հասկանալ առանց նրա կենսաբանական նախադրյալների իմացության:

Իհարկե, ասվածը չի նշանակում, որ բնական ընտրությունն ինքնին կարող է ստեղծել բարոյականություն, բայց այն իրականում խթանել է բարոյական նորմերի ձևավորման միտումները, որի հենքի վրա մարդու մոտ ձևավորվել են էթիկական որոշակի տարրական զգացմունքների, սկզբունքների ընկալում, էթիկական գնահատականներ տալու կարողության և այդ գնահատականներն ընկալելու ունակություն: Ավելին՝ էթիկական գնահատականներ ստանալու պահանջ:

Քանի որ հասարակության ձևավորումով կենսաբանականը չի անհետանում, այլ ամբողջանում է սոցիալականի մեջ և ենթարկվում է նրա դերակատարությանը , ապա ակնհայտ է, որ մարդու և հասարակության սոցիալական բոլոր հատկանիշները պահպանում են իրենց կենսաբանական հիմքը: Հետևաբար,կարելի է ասել, որ բարոյականությունը՝ որպես հասարակական գիտակցության ձև և վարքագծի կարգավորիչ, կախված է սոցիալիզացիայի ենթարկված կենսաբանական հիմքից:

Պատմությունը ցույց է տվել, որ բարոյական գիտակցության ձևը երբեք դուրս չի մնացել նաև ժամանակային ռիթմերից: Այն մերթ դանդաղ և մերթ շատ արագ փոխվել է՝ հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական դինամիկ զարգացման յուրահատկությունների կնիքը իր վրա կրելով:

Ուշագրավ է այն փաստը, որ բնությունից մարդուն տրված գենետիկ ներուժը խստորեն սահմանված է ժամանակի մեջ, կամ ուրիշ կերպ ասած անհատին բնորոշ որոշ հատկանիշների էկզիստենցիալ ժամանակը գործում է նրա ֆունկցիոնալ գործունեության կենսաբանական ոլորտում և ստացվում է, որ հաճախ կենսաբանական էկզիստենցյալ ժամանակը շատ ավելի զորեղ է, քան անհատի սոցիալ-մշակութային ժամանակը: Իհարկե երբեք չժխտելով այն հանգամանքը, որ մարդու էությունը մշտա-

պես դետերմինացվում է սոցիալ-մշակութային գործոնով և մարդու բարոյական վարքագծի գենետիկ ու սոցիալ-մշակութային ինֆորմացիաների մշտական փոխազդեցություն է ընթանում: Գիտությունը պնդում է, որ մարդկային խառնվածքի կարողությունների 30-60% -ը տրվում է նրան կենսաբանական գենային ժառանգական ուղիներով:[1]

Այնուհանդերձ մինչև օրս ժամանակակից գիտությունը դժվարանում է այդ հարցերին միանշանակ պատասխան տալ, և որքան վիճահարույց էին 19-20-րդ դարերում խնդրո առարկայի մասին Լոմբրոզոյի և նրա համախոհների պատկերացումները, նույնքան դրանց հիմնավորումների կարիք զգացվում է նաև այսօր:

Կենսաբանական ուղղության ներկայացուցիչներն, այօր էլ, օգտվելով մարդու մասին ժամանակակից գիտության նվաճումներից, փորձում են հիմնավորել Լոմբրոզոյի գաղափարների ճշմարտացիությունը՝ մասնավորապես մարդու բարոյական վարքագծի գենետիկական դետերմինացվածությունը: Սակայն չմոռանանք, որ Լոմբրոզոյի և նրա հետևորդների հայացքների հիմքում ընկած է մեկ մեթոդաբանական մոլորություն՝ սոցիալականը կենսաբանականին հանգեցնելը, որով այդ տեսությունը ուղղակի անտեսում է վարքագծի սոցիալական պատճառների գոյությունը: Բիոսոցիալական տեսությունը ընդունելով և՛ սոցիալականը և՛ կենսաբանականը էկլեկտիկորեն փորձում է այդ երկուսը համադրել միմյանց հետ:

Կենսաբանական տեսակետը չի բացահայտում սոցիալականի և կենսաբանականի դիալեկտիկան, այն դիտում է զուտ որպես առանձին-առանձին գոյություն ունեցող գործոններ մարդու վարքի ձևավորման գործընթացում: Իհարկե, եթե մարդուն դիտում ենք զուտ կենսաբանականի ամբողջություն, ապա նրա վարքագծի պատճառները, այդ թվում նաև ագրեսիվությունը պետք է, որ լինի և՛ կենսաբանական, և՛ սոցիալական: Այս առնչությամբ Է. Ֆրոմը գրում է, որ ագրեսիան հատուկ է բացառապես մարդուն և այն չի ծնվում կենդանական բնազդներով:Այն պետք չի մարդու ֆիզիոլոգիական գոյատևման համար և միևնույն ժամանակ կազմում է մարդու հոգեկանի կարևորագույն մասը:[2]

Մարդն ունի ինտեգրալ սոցիալական բնույթ, որն իր մեջ ներառում է հայտնի չափով վերափոխման ենթարկված կենսաբանականը: Փաստ է, որ որպես սոցիալական էակ մարդը առաջին հերթին կենսաբանական օրգանիզմ է, որը նրա սոցիալական էության ու սոցիալական գոյության

[1] Տե՛ս **Алфимова М. В., Трубников В. И.,** Генные основы темперамента и личности. «Вопросы психологии» 2000, №2, էջ 128:

[2] Տե՛ս **Фромм Э.** Анатомия человеческой деструктивности. М.1999. էջ 271:

հիմքն է: Դրա համար էլ մարդու վարքագիծը, լինելով ամբողջական սոցիալական էություն, ներառում է նաև կենսաբանական վարքագիծը:

Ընդհանուր առմամբ մարդու սոցիալական վարքագիծը որոշվում է տնտեսական, քաղաքական, կրոնական, բարոյական, սոցիալական և այլ գործոններով: Միաժամանակ, այն զգալի չափով կախված է մարդու գոյության կենսաբանական հիմքից, որը կոնկրետ դեր է կատարում մարդու ձևավորման գործում, այսինքն՝ կենսաբանականը մարդու վարքագծի ձևավորման անհրաժեշտ պայման է: Սակայն հիմնական տեսական դժվարությունը այդ բովանդակության պայմանների բացահայտման մեջ է: Այնպես չէ, որ հասարակական կյանքի բոլոր գործոնները սոցիալական գործընթացների վրա հավասարաչափ ազդեցություն են գործում և որոշակի ուղղություն են տալիս: Ընդհակառակը՝ մարդու սոցիալական էության և վարքագծի մեջ միշտ գոյություն ունի կենսաբանական հիմքով պայմանավորված էական բովանդակություն, որն ամբողջությամբ վերցրած ենթարկվում է մարդու սոցիալական էությունը:

Որքանով, որ յուրաքանչյուր մարդու վարքագիծ միշտ պարունակում է իր մեջ սեփական կենսաբանական բաղադրատարրը կամ տվյալ սոցիալական պահանջներին համապատասխան կենսաբանական ռեակցիաների համակարգ (պայմանական կամ ոչ պայմանական ռեֆլեքսներ, բնազդներ և այլն), ուստի վարքագիծն առավել ընդհանուր դեպքերում գիտակցությանը զուգահեռ կենսաբանական ռեակցիաներ են:

Որոշակի դեպքերում մարդու վարքագծի կենսաբանական հիմքերը դուրս են գալիս մարդու գիտակցական վերահսկողությունից և հակասության մեջ են մտնում վարքագծի սոցիալական նորմերի հետ, ինչպես օրինակ հանցագործների, բարոյական շեղված վարքագիծ ունեցողների, ոչ սթափ վիճակում գտնվող մարդկանց մոտ և այլը: Ընդհանուր առումով այդ ամենը դիտարկվում է «…կառուցողական ու ապակառուցողական գիտակցության մասնավոր դեպքեր, որպես մարդու գործունեության վրա ազդող առանձին բևեռացված տարրեր»:[1]

Թվում է, թե նշված վարքագծային դրսևորումները պայմանավորված են առաջին հերթին կենսաբանական պատճառներով: Սակայն մարդու վարքագծի կենսաբանական գործոնները չունեն բացարձակ ինքնուրույն դերակատարություն և գտնվում են սոցիալական գործոնների հետ բարդագույն փոխհարաբերության մեջ:

Իհարկե, ասվածը չի վերաբերվում մարդու վարքագծի բոլոր դրսևորումներին: Հայտնի է, որ մարդու առանձին հոգեֆիզիոլոգիական վիճակները /օրինակ ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցությամբ պայմա-

[1] Տե՛ս **Томалинцев В. Н.** Сознание.скрытые механизмы становления и развития. Вопросы философии 2018.№4 էջ 38-39:

նավորված/ անկասկած որոշակի տեղ են գրավում հակահասարակական արարքի կատարման հարցում, բայց դրա պատճառը չպետք է զուտ կենսաբանականի տիրությում որոնել: Հարկ է նկատել, որ այն սոցիալական բարդ երևույթ է, որի պատճառներն, առաջին հերթին թաքնված են սոցիալականի բազմաշերտ տիրույթներում:

Կենսաբանական գործոնի ակտիվ դերը առավել նկատելի է հատկապես ուժեղ հոգեբանական հուզմունքի պահին, երբ թուլանում է սեփական վարքագիծը վերահսկելու մարդու ունակությունը: Ագրեսիվ ռեակցիան վերահսկել չկարողանալու մարդու անընդունակությունը բացատրվում է նրա բարոյահոգեբանական (սոցիալական) դաստիարակության աստիճանով, այսպես կոչված անբավարար «դաստիարակված» կենսաբանականով, և կամ՝ ինչպես Ֆրոմն է ասում «որքան մարդը պրիմիտիվ է, այնքան ագրեսիվ է» [1]:

Այդ իսկ պատճառով ֆիզիոլոգիական աֆեկտների ազդեցության տակ դրսևորված վարքագիծը միայն մեղմացնում է և ոչ թե ազատում է սոցիալական պատասխանատվությունից: Եթե ելնենք այն բանից, որ մարդը պետք է գիտակցի և ղեկավարի իր բոլոր արարքները, ապա վարքագծի պատճառական շղթայից պետք է գրեթե իսպառ դուրս մղվի կենսաբանականը: Հատկապես, որ ժամանակակից գիտությունը վերջնականապես չի ապացուցել մարդու սոցիալական վարքագծի բնածին ծրագրավորված լինելու երևույթը: Ավելին, գենետիկայի մասնագետները ոչ միանշանակորեն են պնդում, որ մարդու կյանքում ձեռքբերովի հատկանիշները ժառանգել հնարավոր չէ: Սակայն մարդու վարքագծի կոնկրետ պատճառները բացատրելիս դժվարանում են ասել, թե որքան է կենսաբանականի իրական դերակատարության չափը:

Հոգու և մարմնի կապի մասին գաղափարները գոյություն են ունեցել նաև մինչև 18-19-րդ դարերը:Դարեր ի վեր մարդկության առաջավոր միտքը ֆիքսել է այս երկու գործոնների միասնության հանգամանքը: Նշված երևույթի մասին առանձին դատողությունների ենք հանդիպում դեռևս Պլատոնի, Արիստոտելի, Աքվինացու աշխատություններում, սակայն նրա արմատական ուսումնասիրությամբ սկսեցին զբաղվել անթրոպոլոգները: 19-րդ դարի ավստրիացի նշանավոր բժիշկ Ֆ. Հալը, որը համարվում է ֆրենոլոգիայի հիմնադիրը և նրա հետևորդները գտնում էին, որ մարդկային ուղեղում կարելի է գտնել այն կետերը, որոնք պատասխանատու են այս կամ այն վարքագծի՝ ագրեսիայի, անբարոյականության, գողության, սպանության և այլնի համար: Այդ բոլոր տեսակետները համակողմանիորեն համադրել և զարգացրել են 19-20-րդ դարի նշանավոր

[1] Տե՛ս **Фромм Э.** Анатомия человеческой деструктивностию. М.1999. էջ 161

բժիշկ, մարդաբան, հոգեբույժ Լոմբրոզոն և նրա համախոհները, որոնք իրենց հետազոտությունների կենտրոնում անհատի վարքի, հիմնականում հանցագործությունների զանազան դրսևումները կենսաբանական աղապտացվածությամբ են բացատրում:

Այսպես՝ Լոմբրոզոն պնդում էր, որ «բնածին հանցագործների մոտ նկատվում է չարի, չարության նկատմամբ հակվածություն, որը հատուկ է էպիլեպտիկներին և հիստերիայով տառապող հիվանդներին: Նրանց մոտ ավտոմատ կերպով առանց ակնառու արտաքին պատճառի, ուղղակի հոգեկան կենտրոնների հիվանդոտ գրգռման հետևանքով ծնվում է ատելություն, որը այս կամ այն հանցագործ արարք կատարելով է դրսևորվում»[1]:

Իհարկե, Լոմբրոզոյի գիտական ժառանգության ելակետային դրույթների նկատմամբ արդի մեկնաբանությունները հիմնականում բացասական են: Սակայն դրանով հանդերձ հազիվ թե ժամանակակից գիտությունը կարողացել է այս հարցերի վերջնական պատասխանը տալ, լոմբրոզոյան տեսակետը հիմքից մերժել, հատկապես, եթե հաշվի առնենք, որ այդ բնագավառում վերջին հարյուր տարվա բնագիտության ձեռքբերումները շատ համեստ են և վերոհիշյալ տեսակետները արմատապես մերժող հեղափոխական փաստարկներ առայժմ գիտությունը չունի:

Ի վերջո Լոմբրոզոյան էմպիրիկ, տեսական ու մեթոդաբանական հիմնավորումները 19-րդ դարի վերջերին արտացոլում են կենսաբանականի ու սոցիալականի հարաբերությունների մասին գոյություն ունեցող այդ դարաշրջանի երբեմն չհիմնավորված ու հիմնականում չապացուցված հայեցողական պատկերացումները:

Այսպիսով, մարդու վարքագծի և մասնավորապես բարոյական մղումների պատճառական կապերի բացատրություններում գուցե չպետք է անտեսել կենսաբանականը: Եվ մեթոդաբանական հրամայական է մնում մարդու բնույթի իմաստավորման հարցում միակողմանի կենսաբանականացմից կամ սոցիալականացումից զգուշանալը: Չմոռանալով, որ մարդ արարածի բարոյական վարքագծի կեցութային աշխարհը տրված է նրա գենոմշակութային շրջանակներում:

Размик Тигранян, Проблема биологических основ нравственного сознания - Система биологических норм поведения выступает биологическим аналогом, предшественником и предпосылкой нравственности как специфичкски социальной формы регуляции поведения. Нравственность возникает из системы биологических норм поведения под

[1] Տե՛ս **Ломброзо Ч.** Женщина преступница или проститутка.М. 1998 էջ 457:

влиянием складивающегося процесса трудовой деятельности. Нравственность как форма сознания и регулятор поведения зависит от ее очеловеченных биологических основ.

Razmik Tigranyan, Problem of biological bases of moral consiousness - The system of biological norms of behavior acts as a biological analogue, predecessor and premise of morality as a specific social form of regulation of behavior. Morality arises from a system of biological norms of behavior under the influence of the emerging process of labor activity. Morality as a form of consciousness and a regulator of behavior depends on its humanized biological foundations.